

առաքինի եւ սուրբ, կոյս եւ ընտիր. որ օր մի առանց ութ կանոն Սաղմոսի ոչ անցուցանէր. եւ ժամ մի դատարկ ոչ լինէր. այլ 35
 զցայգ եւ զցերեկ հսկէր եւ տքնէր յաղօթս անձանձիր ռոնակացութեամբ. եւ պարապէր միշտ ընթերցմամբ սուրբ Գրոց: Առ այսպիսի աստուածահաճոյ արս կացեալ:

ՍՈՒՐԲ ՍՈՓԻԱ

Օր մի խնդրեցի զոմն քաղաքացի եւ 40
 գնացաք ի միասին ի տենչալին ամենեցուն Սուրբն Սոփիա. եւ տվեալ կաշառ շխեբուն՝ մուծին զմեզ ի ներս: Եւ տեսեալ զմեծութիւն եւ զվայելչութիւն տաճարին, զլայնութիւն եւ զբարձրութիւն, եւ հիացեալ 45
 փառս տվաք Աստուծոյ. զոր ոչ երբեք տեսաք ուրեք այնպիսի շինուածք: Այլ եւ տեսաք ի նմա բազում զարմանալի սիւնս մեծամեծս, զանազան մարմարիոնեայ երկայնս եւ միջակս, ազգի ազգի ստուար եւ նուրբ, 50
 գեղեցիկ ի տեսութիւն աչաց. ոմն կարմիր, ոմն սպիտակ իբրեւ զձիւն, ոմն լուրջ եւ ոմն կանաչ, ոմն սեւ եւ ոմն ծիրանի. եւ այլքն խէտումէա. իսկ կէսքն խէտումէա կոփած եւ քանդակած զժուար իմն կապուածովք. 55
 եւ զփորվածքն լցեալ ռսկով եւ լաճվարդով: Զի աչք հազար պիտի որ հայի եւ վայելէ գեղեցկութիւն արվեստին: Եւ կայր սիւն մի

39 այբս: — 42 սոփիայ: — 46 երբէք: — 47 ուրէք: — 54 կորած: